ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՆԱՐԱԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՇՁԲ-18/1

ք. Երևան «26» «10». 2018թ.

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս վարչության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ.Սևոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կապալառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **վերանորոգման շինարարական** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2018թ. դեկտեմբերի 1-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում ծավալաթերթ-նախահաշվին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները ծավալաթերթ-նախահաշվին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **8635939** (ութ միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր երեսունինը) ՀՀ դրամ, որից **1439323** (մեկ միլիոն չորս հարյուր երեսունինը հազար երեք հարյուր քսաներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Պայմանագրի գնից՝ **4500000** (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է __13___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 և N4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Արշակունյաց-63	ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 163018140422
ՀԿՀՀ 02204739	ՀԿՀՀ 02560711
Ծառայության պետ՝	Գլխավոր տնօրեն՝
Ա.Մխոյան	Մ.Սևոյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«26» « 10 ». 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՐԴԵՆ ԻՍԿ ՎԹԱՐՆԵՐԻ ԵՎ ԽԱՓԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ, ԸՍՏ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ՝

1-ԻՆ ՉԱՓԱԲԱԺԻՆ՝
ՀՀ ԱՆ «ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՔԿ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Վարչական տարածքի արտաքին ջրամատակարարման ցանցի վերանորոգում				
1.	Ասֆալտե և բետոնյա ծածկույթի երկկողմանի կտրում ալմազե սղոցով	մ	88	700	61 600
2.	Ասֆալտի քանդում L=80 մ , h=0.08մ , b=0.5մ	մ3	4,8	5 500	26 400
3.	Խճից նախաշերտի ստեղծում L=80մ , h=0.08մ	100մ2	0,6	120 000	72 000
4.	Ասֆալտի վերականգնում խոշորահատիկ խառնուրդից 4սմ հաստության	100մ2	0,56	580 000	324 800
5.	Խրամուղու քանդում 4-րդ կարգի գրունտներում ձեռքով	մ3	64	4 300	275 200
6.	10 սմ հաստության ավազե նախաշերտի պատրաստում և վրալիցքի կատարում 20 սմ հաստ.	մ3	18,4	8 500	156 400
7.	Տեղի փափուկ գրունտից հետլիցք ձեռքով տոփանումով	մ3	32	1 500	48 000
8.	Ավելորդ գրունտի բարձում ա/ինքնաթափեր ձեռքով	մ3	26	2 000	52 000
9.	Գրունտի տեղափոխում 15 կմ	տ	57,2	3 500	200 200
10.	Փ*159 մմ պողպատյա խողովակից պատյանի տեղադրում	մ	18,8	11 500	216 200
11.	Փ*159 մմ պողպատյա խողովակի մեկուսացում բիտումային մաստիկով	մ	18,8	3 200	60 160
12.	ՊԷԹ խողովակի անցկացում պատյանով Փ*90 մմ (այդ թվում ՊԷԹ խողովակի արժեքը)	մ	19,2	5 300	101 760
13.	Փ*133 մմ պողպատյա խողովակից պատյանի տեղադրում	մ	7,6	9 500	72 200
14.	Փ*133 մմ պողպատյա խողովակի մեկուսացում բիտումային մաստիկով	մ	7,6	3 200	24 320
15.	ՊԷԹ խողովակի անցկացում պատյանով Փ*63 (այդ թվում ՊԷԹ խողովակի արժեքը)	մ	67,2	4 000	268 800
16.	Պատերի մ»ջ անցքերի բացում	հատ	2	3 000	6 000
17.	Անցքերի լցափակում	մ3	0,1024	45 000	4 608
18.	Փ* 25 մմ մետաղապլաստե խողովակից ջրագծի մոնտաժում	մ	6,8	1 500	10 200
19.	Փ* 25 մմ փականների տեղադրում	հատ	2	8 500	17 000

20.	Ջրագծի հիդրավլիկ փորձարկում	մ	93,2	600	55 920
21.	ՊԷԹ ձևավոր մասերի տեղադրում եռաբաշխիչ	հատ	2	6 500	13 000
22.	Պատյանի ծայրերի լցափակում խծուծով և բիտումով	հատ	2	24 000	48 000
23.	ՊԷԹ խողովակատարի լվացում և ախտահանում	կմ	0,094	150 000	14 100
24.	Դիտահորերի հատակի խճապատում 10 սմ հաստ.	մ3	0,6	9 500	5 700
25.	Ջրագծի դիտահորի պատրաստում ուղիղ կտրվածքի տուֆ քարից/3հատ/	մ3	2	75 000	150 000
26.	Դիտահորի մտոցի կողերի լցումներ բետոնով	մ2	1,8	45 000	81 000
27.	Փ*50 մմ սողնակային փականի տեղադրում կցաշուրթով	հատ	1	19300	19 300
28.	Փ*25 մմ գոյություն ունեցող ջրագծերի միացում նոր գծից	հատ	2	3500	7 000
Ընդամենը					**2 391 868**
Շահույթ					**263 105**
Ընդամենը					**2 654 973**
Չնախատեսված ծախսեր					**79 649**
Ընդամենը					**2 734 623**
ԱԱՀ		**20%**			**546 925**
Ընդամենը					**3 281 547**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Արշակունյաց 2ա հասցեում:

2-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆ՝
ՀՀ ԱՆ «ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՔԿ ՀԻՄՆԱՐԿԻ ՌԵԺԻՄԱՅԻՆ ԳՈՏՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Ռեժիմային գոտու արտաքին ջրամատակարարման ցանցի վերանորոգում				
1.	Ասֆալտե և բետոնյա ծածկույթի երկկողմանի կտրում ալմազե սղոցով	մ	132	700	92 400
2.	Ասֆալտի քանդում L=80 մ , h=0.08մ , b=0.5մ	մ3	7,2	5 500	39 600
3.	Խճից նախաշերտի ստեղծում L=80մ , h=0.08մ	100մ2	0,9	120 000	108 000
4.	Ասֆալտի վերականգնում խոշորահատիկ խառնուրդից 4սմ հաստության	100մ2	0,84	580 000	487 200
5.	Խրամուղու քանդում 4-րդ կարգի գրունտներում ձեռքով	մ3	96	4 300	412 800
6.	10 սմ հաստության ավազե նախաշերտի պատրաստում և վրալիցքի կատարում 20 սմ հաստ.	մ3	27,6	8 500	234 600
7.	Տեղի փափուկ գրունտից հետլիցք ձեռքով տոփանումով	մ3	48	1 500	72 000
8.	Ավելորդ գրունտի բարձում ա/ինքնաթափեր ձեռքով	մ3	39	2 000	78 000
9.	Գրունտի տեղափոխում 15 կմ	տ	85,8	3 500	300 300
10.	Փ*159 մմ պողպատյա խողովակից պատյանի տեղադրում	մ	28,2	11 500	324 300

11.	Φ*159 մմ պողպատյա խողովակի մեկուսացում բիտումային մաստիկով	մ	28,2	3 200	90 240
12.	ՊԷԹ խողովակի անցկացում պատյանով Φ*90 մմ (այդ թվում ՊԷԹ խողովակի արժեքը)	մ	28,8	5 300	152 640
13.	Φ*133 մմ պողպատյա խողովակից պատյանի տեղադրում	մ	11,4	9 500	108 300
14.	Φ*133 մմ պողպատյա խողովակի մեկուսացում բիտումային մաստիկով	մ	11,4	3 200	36 480
15.	ՊԷԹ խողովակի անցկացում պատյանով Φ*63 (այդ թվում ՊԷԹ խողովակի արժեքը)	մ	100,8	4 000	403 200
16.	Անցքերի լցափակում	մ3	0,1536	45 000	6 912
17.	Φ* 25 մմ մետաղապլաստե խողովակից ջրագծի մոնտաժում	մ	10,2	1 500	15 300
18.	Φ* 25 մմ փականների տեղադրում	հատ	2	8 500	17 000
19.	Ջրագծի հիդրավլիկ փորձարկում	մ	139,8	600	83 880
20.	ՊԷԹ ձևավոր մասերի տեղադրում եռաբաշխիչ	հատ	3	6 500	19 500
21.	ՊԷԹ ձևավոր մասերի տեղադրում քառաբաշխիչ	հատ	1	8 500	8 500
22.	Պատյանի ծայրերի լցափակում խծուծով և բիտումով	հատ	4	24 000	96 000
23.	ՊԷԹ խողովակատարի լվացում և ախտահանում	կմ	0,141	150 000	21 150
24.	Դիտահորերի հատակի խճապատում 10 սմ հաստ.	մ3	0,9	9 500	8 550
25.	Ջրագծի դիտահորի պատրաստում ուղիղ կտրվածքի տուֆ քարից/3հատ/	մ3	3,2	75 000	240 000
26.	Դիտահորի մտոցի կողերի լցումներ բետոնով	մ2	2,7	45 000	121 500
27.	Φ*80 մմ սողնակային փականի տեղադրում կցաշուրթով	հատ	1	43 000	43 000
28.	Φ*50 մմ սողնակային փականի տեղադրում կցաշուրթով	հատ	2	19 300	38 600
29.	Φ*25 մմ գոյություն ունեցող ջրագծերի միացում նոր գծից	հատ	3	3 500	10 500
30.	Φ*90մմ ջրագծի խողովակի միացում գործող գծին	հատ	1	10 000	10 000
31.	ՊԷԹ կցաշուրթ 80մմ	հատ	1	5 000	5 000
Ընդամենը					**3 685 452**
Շահույթ					**405 400**
Ընդամենը					**4 090 852**
Չնախատեսված ծախսեր					**122 726**
Ընդամենը					**4 213 577**
ԱԱՀ		**20%**			**842 715**
Ընդամենը					**5 056 293**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Արշակունյաց 2ա հասցեում:

3-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆ՝
ՀՀ ԱՆ «ՎԱՐԴԱՇԵՆ» ՔԿ ՀԻՄՆԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	Ներքին կոյուղու ցանցի վերանորոգում				
1	Պատերի մեջ անցքի բացում խողովակների անցկացման համար և լցափակում ցեմ շաղախով (0.008 խմ)	հատ	4	3 000	12 000
2	Φ 100 մմ կոյուղագծերի ապամոնտաժում	մ	9,2	750	6 900

3	Φ 50 մմ կոյուղագծերի ապամոնտաժում	մ	5,6	750	4 200
4	Φ 110մմ կոյուղագծերի խողովակների փոխարինում	մ	9,2	4 200	38 640
5	Φ 50մմ կոյուղագծերի խողովակների փոխարինում	մ	5,6	3 400	19 040
6	Լվացարանի ապամոնտաժում և տեղադրում	հատ	1	15 000	15 000
7	Զուգարանակոնքի ապամոնտաժում և նորի տեղադրում	հատ	1	20 000	20 000
8	Կոյուղու պոլիէթիլենային Φ 110մմ ձևավոր մասերի տեղադրում (արմունկներ , եռաբաշխիչներ և անցումներ)	հատ	28,0	2 500	70 000
9	Կոյուղու պոլիէթիլենային Φ 50մմ ձևավոր մասերի տեղադրում (արմունկներ , եռաբաշխիչներ և անցումներ)	հատ	10,0	1 200	12 000
10	Կոյուղագծերի փորձարկում	մ	15,0	500	7 500
11	Կոյուղագծերի միացում գործող գծերին	հատ	1,0	12 000	12 000
Ընդամենը					**217 280**
Շահույթ					**23 901**
Ընդամենը					**241 181**
Չնախատեսված ծախսեր					**7 235,46**
Ընդամենը					**248 416**
ԱԱՀ		**20%**			**49 683**
Ընդամենը					**298099**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան Նուբարաշենի խճուղի 7 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Ծառայության պետ՝
Ա.Մխոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02560711
Գլխավոր տնօրեն՝
Մ.Սևոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«26» « 10 ». 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՐԴԵՆ ԻՍԿ ՎԹԱՐՆԵՐԻ ԵՎ ԽԱՓԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափա-բաժնի համարը	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի վարչական տարածքի արտաքին ջրամատակարարման ցանցի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	01.12.2018թ.
2	ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի ռեժիմային գոտու արտաքին ջրամատակարարման ցանցի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	01.12.2018թ.
3	ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի ներքին կոյուղու ցանցի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	01.12.2018թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օրվանից	01.12.2018թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Ծառայության պետ՝
Ա.Մխոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02560711
Գլխավոր տնօրեն՝
Մ.Սևոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 3
«26» « 10 ». 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ, այդ թվում՝							
1	45461100/27	ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի վարչական տարածքի արտաքին ջրամատակարարման ցանցի վերանորոգման աշխատանքներ	0	0	0	3281547	3281547
2	45461100/30	ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի ռեժիմային գոտու արտաքին ջրամատակարարման ցանցի վերանորոգման աշխատանքներ	0	0	0	5056293	5056293
3	45461100/9	ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի ներքին կոյուղու ցանցի վերանորոգման աշխատանքներ	0	0	0	298099	298099
		ԸՆԴԱՄԵՆԸ					8635939

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/6
Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02560711

Գլխավոր տնօրեն՝
Մ.Սևոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«26» « 10 ». 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
«26» « 10 » 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն